

Որրանոցը փոխադրուեցաւ Շեմարան, ի մօռոյ հսկողութիւն ունենալու մասունքների առողջական պիճակի վերաբէց Այս հոգածութիւնների վերաբէց էր Որրանոցի վարչութիւնը, երբ Որրանոցի հառավարչուհին դեկտ. կեներին և Որրանոցի վարիչը, հ. Բարդէն վարդապետ, դեկտ. 27-ին բժաւոր տիֆուս վարակուեցան ծանր կերպով և Որրանոցի վարչութիւնը ժամանակաւոր կերպով անցաւ Շեմարանի վարչութեան։ Նոր Վարչութեան էական նպատակն եղաւ երեան եկած բժաւոր տիֆի դէպքերն անմիջապէս ան-ջառել և յատուկ Հիւանդանոցներում տեղաւորել, որպէս զի առողջ վիռքրերի մէջ շտարածուի հիւանդութիւնը խիստ մեծ ուշադրութեան տուարելայ եղաւ նոցա նիստ ու կացի, մաքրութեան խնդիրը, Որրանոցի այցելուներին բոլորուն արգելուեցաւ որբերին այցելել, որովհետեւ հետախուզուեցաւ, որ վարակիչ հիւանդութիւնը դիւղից էր անցել Որրանոց, այցելող ազգականների միջոցաւ։ Այսպիսով ձեռք տանուած միջոցների շնորհիւ Որրանոցի, առ բուլե, վատանդաւոր պայմանները հետդիետէ անհետացան։



Տ. ԿԱՐԱՊԵՅ ԵՊԻՍԿՈՊՈՅ

(Առաջնորդ Շամախու քեմի)

Նոյեմբերի 19-ին, գիշերուայ ժամը 10-ին, Բագռի նաւթարդիւնարերողների խորհրդի Ան քաղաքի հիւանդանոցում կնքեց իւր մահկանացուն Շամախու թեմի տոաջնորդ Տ. Կարապեյ եղիսկոսոս, մեր առկաւթիւ միա-

բանութեան ականաւոր դէմքերից մէկը՝ իւր վարժապետական, հոգուական և զիտական զործունեւութեամբ և եռանդով՝ Երկար, զեռ շատ երկար տարիներ զզալի կլինի նորս կորուսոր մեր միարանութեան մէջ, որովհետեւ մեծ պատրաստութիւնն ու հմտութիւն ուներ, կաւելացնեմ նաև աշխատանքի ընդունակութիւնը, ընդհանուր և ազգային եկեղեցու աստուածաբանական զիտութիւնների մէջ։ Նորս կորուսոր ողբալի է նու իրրե դաստուի և սրտացաւ հոգուի, իրրե եռանդուն և անձնու էր զործչի եկեղեցական կեանքի փշոտ ասպարիզում։ Դորսնով պէտք է բացատրել նորս հօտի, աշակերտների, բանիմաց հասարակութեան և զիտութեան ներկայացուցիչների արտայայտած խորին վշտակցութիւնը բազմաթիւ հեռազիրներով և. Սրբութեան անունով, ինչպէս և կովկասի և մայրաքաղաքի հայ և ուս թերթերի և զիտական պարբերականների կողմից։ Բաւական է յիշել հայազիտութեան մեծ վաստակաւոր ակադեմիկ Մատի ընորոշումը նորս մասին. «Հանգուցեալ արհու մահուամբ, ոչ միայն Հայոց, այլ և ընդհանրապէս հին քրիստոնէական եկեղեցու պատմութիւնը զրկւում է իւր տաղանդաւոր, արևմտեան Եւրոպայի աստուածաբանական լաւագոյն պարոց անցած, թէ հնագոյն և թէ նորագոյն ժամանակի քրիստոնէական եկեղեցու պատմութեան, մասնաւորապէս Հայ ազգային եկեղեցու հմտագոյն մի ուսումնասիրողից»,*)

Կարտովետ եպիսկոպոսը ծնուել է 1866 թ. Գողթնեաց դաւառի Յզնա գիւղում։ Մանկական կրթութիւնն ստացել է իւր մօր խնամքի տակ, նախ հայրենի գիւղում և ապա Զաքաթալայի զաւոռական զպրոցում։ Մայր Աթոռի ձեմարանն է ընդունուել 1880 թ., և ուսումն յաջողութեամբ տարտել այստեղ 1888 թ.. Այդ տարին ձեմարանում աստուածաբանական զիտութիւնների դաստու էր Տ. Մազարիս եպիսկոպոս Օրմանեան, որ հրաւիրուած էր ժամանակի տեսչի՝ Արշակ Նահապետեանի (Նահապետ

*) Христіанскій Востокъ Т. IV. 226. 1915. Петроградъ.

եպիսկոպոս) ջանքերով, որպէս զի հնարաւոր լինի հոգեոր անունը կրող այդ հաստատութեան մէջ հայ եկեղեցու պաշտօնեաներ պատրաստելու Կարապետ Տ. Մկրտչեան և իւր զաւընկերներից մի քանիսն արդէն խօսք էին առել Հայ եկեղեցու սպասաւորութեան լուծն իրենց վրայ առնել, բայց խօսքին նոցանից հաստատ մնաց միայն հանդուցեալը, երիտասարդ և անփորձ հասակում կրելով յուստահատութեան հասցնող զրկանքները։ Նորա խղճն իրազործուեցաւ միայն 1889 թ., երբ հանդուցեալ Նահապետեանի և երկու ընկերների հետ ծունկ չոքեց Տիրոջ սեղանի տառջ իւր կեանքը Հայ եկեղեցու պայծառութեան նուիրելու։ Ապա նոյն Նահապետեանի աշխատութեամբ հնարաւոր եղաւ համոզել Տ. Մակար կաթուղիկոսին՝ Կարապետ և Գեորգ Չորեքչեան սարկաւագներին Քամոյենց եկեղեցու հաշուով Գերմանիա ուղարկելու, մէկը աստուածարանական գիտութիւնների և միւսը երաժշտութեան մէջ կատարելազարծուելու։ Կարապետ սարկաւագը արտասահմանում մնաց մօտ 5 տարի, նախ վիլիխովիայական գործորի և ապա աստուածարանութեան լիցենցիատի (մագիստրոսի) գիտական աստիճան ստանալով։ Նորա շաբագրութիւնը Պաղիկեանց մասին անմիջապէս զրաւեց գիտական աշխարհի ուշագրութիւնը ոչ միայն սրբով։ Գելցերի և այլոց քննական գնահատութեան արժանանալով, այլ և առիթ տալով ուրիշ գիտականների ևս նոյն խնդրով զրադուելու։

Արտասահմանից նա վերադարձաւ 1894 թ., իսկ սեպտ. 11-ին ճեմարանական հինգ սարկաւագների հետ ձեռնազրուեց արեգայ, ճեմարանի հիմնադրի զերեզմանի վրայ իւր և ընկերների կողմից ուխտի սրտառուչ մի ճառ սրբառանելով ազագայ զործունեութեան վերաբերութեամբ։ Նոյն թուականին նա արդէն նշանակուած էր ճեմարանում աստուածարանական գիտութիւնների գաստու և տեսչի օգնական։ 1895 թ. նշանակուեց «Արարատ»-ի խմբագրութեան անդամ, դեկամարելով յատկապէս կրօնական բաժինը, իսկ 1907 թ. ընդհատումներով, իրրե-

ինազօք խմբագիր՝ կրօնական և բանտախրական ընտիք յօդուածներով զարդարելով նորա էջերը, Վարդապետական աստիճանն ստանում է նա 1895 թ. միար. 25-ին, իսկ 1897 թ. լանջախաչ ի խրախոյս այն անձնուելը ծառայութեան, որ երեք տարուայ ընթացքում ցոյց տուաւ իւր ստանձնած պաշտօններում. 1899 թ. 8. Մկրտիչ կաթուղիկոսից ստացաւ նորա անձնական ժաղկեայ վիճակը, նոյն տարին Նշանակուելով նաև ճեմարանի տեսուչ՝ ոլ. կ. Կոստանեանի հրաժարուելու պատճառով՝ նորա տեսչութիւնը երեք տարի տևեց, բարոյական շինութեան հետ կանգնելով Եղբարք Թումայեանների ծախքով յատուել շէնք հիւանդանոցի համար. Տեսչութիւնից հրաժարուելուց լեռոյ՝ դարձեալ մի տարի շարունակեց իւր ուսուցչութիւնը ճեմարանում և տպա 1903 թ. Նշանակուեց Երևանի փոխ-թեմակալ ամենազժուարին պայմաններում, երբ եկեղեցական կալուածների դրաւման պատճառով մեծ հոգածութեան տարկայ էր թեմական դպրանոցի պահպանութեան խնդիրը. Նորա առաջնորդութեան ժամանակ սկսուեցաւ նաև հայ-թուրքական անմիտ ընդհարութերը, որի պատճառով ցոյց տուեց երախտազիտութեան արժանի հայուական անձնուելը գործունեութիւն. Նա դարձեալ մի տարի՝ 1905/6 թուին ճեմարանի ուսուցչութեան պաշտօն յանձն տուաւ, բայց հետեւել տարին ստիպուած էր ոչ միայն իւր ընկերների հետ հրաժարուել ճեմարանի ուսուցչութիւնից, այլ և Բազու զնալ որպէս զիմնադիայի ուսուցիչ, զժղոհ և հայածուած այն տիսուր պայմաններից, որ ստեղծուած էր նորա և ընկերների համար. Այդուեղ նա տպաղըց ռԱղուային Եկեղեցից մերնադրով գեղեցիկ տեսրակը, որի մէջ իւր հայեացըն է բացատրում մայրենի եկեղեցու մասին, Բարեբաղդարար Բաղւում երկար չմնաց, և 1907 թ. հոկտ. 30-ին Առրաջատականի առաջնորդ ընտրուեց, որ և վարեց մինչև 1912 թ. օգոստ. 26-ը. 1908 թ. նա հրատարակեց իւր ռՀայոց Եկեղեցու պատմութիւնը, մասն Ա., և տարրաբաղդարար Հկարողացաւ շարունակել առաջնորդական պաշտօնի բերմունքով. Եղիսկոպոսական աստիճան

ստացաւ Տ. Տ. Մատթէոս Ռ. Կաթուղիկոսից 1909 թ. հոկտ. 25-ին հօսի խրդիրքի համաձայն՝ Նորա գործունեութիւնն Առաջատականում կազուած էր մի շարք զժուարութիւնների հետ, այնտեղ ծագած յեղափոխութեան պատճառով, բայց իւր անձնուէր և խոհեմ գործունեութեամբ յաջողեցաւ ոչ միայն հօտն ազատիլ դժբաղդ պատահարներից, այլ և միջոց գտաւ հոգևոր-քաղաքակալութական ձեռնարկութիւններ անել, որովհետն կեղրոնական գովրոցի ապահովութեան և կարգաւորութեան խնդիրն էր:

Ազանա հրաժարուելով իւր պաշտօնից՝ մինչև 1914 թ. մայ անողաշտօն՝ լաւագոյն կերպով շահագործելով իւր ժամանակը զիտութեան համար. 1912 թ. հրատարակեց իւր Հ. Միւռանի օրհնութիւնը՝ տետրակը, իսկ 1913 թ. իւր մեծ աշխատութիւններից մէկը՝ սկսիք Հաւատոյան. 1914 թ. Ե. Սրբութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսի կողմից Շամախու թեմի առաջնորդ նշանակուեց, բայց հազիւ լրացրած իւր պաշտօնում $1\frac{1}{2}$ տարին՝ հանգեցաւ ի Տէր տոոյզ և աշխատութեան լաւագոյն հասակում, Նորա կարճառն գործունեութիւնն իսկ այդ թեմում, բաւական եղաւ գրաւելու հօտի ուշագրութիւնն ու սէրը, որ այնքան անկեղծ կերպով արտայատուեցաւ թաղման օրերին:

Կարասովեան եպիսկոպոսի գործունեութեան աւելի կարեւը զիծը նորա զիտական աշխատութիւններն են կազմում: Առաջինն էր զոցանից Die Paulikianer im byzantinischen Kaiserreiche u. verwandte erscheinungen in Armenien, որի մասին խօսք եղաւ վերիւ: Որա հետ կազ ունէր «Die Thondrakier in unseren Tagen, 1895 թուին հրատարակուած Զետչի համար ամսագրի մէջ, օգոստելով սփորձա-ի մէջ հրատարակուած «Բանալի հշմարտութեան» տետրակից»:

Հայագիտական մանր, բայց կարեւը յօդուածների մի մեծ շարք հրատարակել է նաև Արարատա-ի մէջ: 1893 թ., երբ նա Պօլսի վերայով հայրենիք էր վերադառնում, Անտառնեանց մատենագրանում ծանօթացաւ: «Գիրք Բղբոց»

կոչուած ժողովածուի հետ, որտեղից արտադրած՝ Բարգենը
Ներսէս և Կոմիասս կաթուղիկոսների մի քանի թղթերը
հրատարակեց Հարկառոր լուսաբանութիւններով, բոլորովին
նոր լոյս սփռելով Հ. Եկեղեցու Զ—Է դարերի պատմու-
թեան վրայ, կարենոր մի յիշատակարան էր նաև Երուսա-
ղեմի Յովհաննէս Եպիսկոպոսի թուղթն ու զգուած Ազուանից
Արաւ կաթուղիկոսին, դարձեալ նոյն ժամանակին վերա-
բերեալ. Փոքը ինչ կասկածելի կարելի է համարել ռեսու-
տովանութիւն» են վերնադրով թուղթը, որ Օձնեցուն է
վերագրում. Այս թղթերը հրատարակուած են նաև առան-
ձին տետրակիներով: «Արարատուի մէջ հրատարակեց նաև
Գօշ Միհիթարի մի թուղթը և ուրիշ բազմաթիւ հատուած-
ներ ընդէ. Եկեղեցու հայրերի զրուածներից, ինչպէս
իրինիոսի, Դրիզոր օքանչելադործի, նախնեաց թարգմա-
նութեամբ *:

Բայց նորա զիտական կարենոր աշխատութիւններն
սկսան հետզհետէ լոյս տեսնել 1907 թուից: Այդ թուին
նա հրատարակեց գերմաններէն Բարգմանութեան հետ Հար-
նակի Texte u. Untersuchungen-ի շարքի մէջ իրենիոսի Յոյցը
առաքելական-ը՝ Երուանդ նախնին վարդապետի աշխատակ-
ցութեամբ **, Դրուածքը մեծ չէ, բայց անզնահատելի
արժեք ունի Բ. դարու քրիստոնէութեան դաւանաբանու-
թեան համար: Դարա բնագիրը կորած է և միոյն վերնա-
դիրն է յայտնի Եւսեբիոս Կեսարացուց: Հարնակը հրատա-
րակութեան իւր կողմից աւելացրեց ծանօթութիւններ և
լուսաբանութիւններ: Այս ձեռագիրը, որ այժմ պահուում է
Մ. Աթոռի մատենադարանում, գտել էր Երևանի կաթու-
ղիկէ Եկեղեցում. նոյն ձեռագրի մէջն էր և Իրենիոսի
«Ըստդէմ Հերձուածոց» աշխատութեան շորրորդ և հին-
գերուրդ գլուխների թարգմանութիւնը, որ 1910 թ. հրա-

* Արարատ 1896, 1898.

** Des Heiligen Jrenaens Schrift zum Erweise der apost. Ver-
kündigung.

*** Jrenaens Cegen die Häretiker. Leipzig. 1910.

տարակեց Երուանդ վարդապետը նոյն շաբթի մէջ, Իրենիսի զիւտը զիտական աշխարհի մէջ միանցաւմայն հրոշակ ստեղծեց Կարապետ Եպիսկոպոսի համար, զարկ տալով նորանոր աշխատութիւնների։ Պրոֆ. Սաղարդան 1907 թ. նախ Հրատակութեան Վագարշակ աղարքերականում, և ապա առանձին հրատարակեց Երենիսի ուսուերէն թարգմանութիւնը, 1908 թուին առանձին ևս հրատարակուեցաւ զերմաններէն թարգմանութիւնը, 1913 թ. Երևանդենի համալսարանի սպրով. Jordan-ը հրատարակեց Արmenische Geschichtefragmente. 32 հատուածով, որոնցից եօթը դարձեալ Կարապետ Եպիսկոպոսն էր հոգացել.

Մի ուրիշ կարեար զիւտարել էր Մ. Աթոռի մատենադարանում 1897 թ., Աղեքսանդրիայի պատրիարք Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնը, որ միայն 1908 թ. հրատարակել կարողացաւ, դարձեալ Երուանդ վարդապետի աշխատակցութեամբ և Սուրբաս արքեպիսկոպոսի ծախքով։ Այդ հրատարակութիւնն ևս հայկականից զատ ընդհանուրական եկեղեցու պատմութեան համար առաջնակարգ նշանակութիւն ուներ, որովհետեւ ընազիրը կորած է և հայերէն թարգմանութեամբ է միայն յայտնի դառնում զիտական աշխարհին։ Այս աշխատութիւնն ևս առիթ եղաւ հայ բանակըններին նորանոր ուսումնասիրութիւններ անելու։

Երրորդ կարեար հրատարակութիւնը սկսիք Հաւատոյն էր, որ գտել էր 1911 թուին Դարաշամբի Ա. Ստեփանոս Նախավկայի վանքում, սկսիք Հաւատոյն եկեղեցական հայրերի զրուածներից վերցրած վկայութիւնների ժաղովածու է, ըստ ընորոշման հանդուցեալի մի սկսթող Հայոց եկեղեցու ընդունած այն դաւանական դրութեան, որ իւր կատարեալ զարդացման աստիճանին հասել է է. զարուսկզրում, կազմուած Մայրագումեցու ձեռքով կոմիտաս կաթուղիկոսի ժամանակ։ Այս ժողովածուն ևս մատենագրական ահաղին արժէք ունի, որով կարելի է շատ թարգմանութիւնների տեղանու ած զամբակ ունի ու ուղարկ ու ուղարկ այսուղի մէջ են բերուած ընդհանուր և հայ եկեղեցական հայրերից վկայութիւններ, որոնց ամբողջական

թարգմանութիւնները կամ բնադիրները զեռ անյայտ են մեր մէջ։ Այդ գործին կցուած «Ներածութիւնը» գնահատելի մի ուսումնասիրութիւն է Հ. Եկեղեցու Զ—Է դարերի պատմութեան և մատենագրութեան համար։ Այս աշխատութեան հետ կազ ունի նաև նորա մի ուսումնասիրութիւնը՝ «Յովհանն Մանղակունի և Յովհանն Մոյրագոմեցի», որ հրատարակեց 1913 թուին «Եղակաթ» ժողովածուի մէջ։

Հանգուցեալի վերջին աշխատութիւնն էր «Դոփեանք և Մելիք Շահնազարեանք», 1914 թ., որ մանրակրկիտ ուսումնասիրութեամբ ցոյց է տալիս Մելիք Շահնազարեանների ծագումը ԺԴ. դարում յառաջ եկած Դոփեան իշխանական տոհմից։

Հանգիստ ուկերացդ Եկեղեցու բազմաշխատ սպասուոր։

Գաւեզին Վարդապետ

